դատել 'ի մէնջ դատաստանի նոյն քաղաքին, և եթէ 'ի վճռոյն այնմիկ մի՛ բաւեսցի դանդատող և դատախազն կարող է յառաջ քան զ 15 աւուր ժամանակի յետ վճռոյն իւրոյ մուծանել 'ի բարձր դատաստան, այլ եթէ 'ի վճռոյ դատաստանի քաղաքին իւրոյ բաւականասցի, և կամ տասն և հինգ աւուր ժամանակն անցանի, և կամ յառաջ քան զ 15 օր մուծցէ 'ի բարձր դատաստան և դոցի վճիռ 'ի բարձր դատաստանէ այն իցէ արդարութիւն որ ո՛չ երբէք կրկին յիշել կարասցէ, և ո՛չ ոք դատաստան 'ի վերայ վճռեալ բանի կրկին ունկս դնիցէ։

ԳԼՈՒԽ ՄԷԲ.

Ամենայն վկայութիւն 'ի յումեքէ որ հարկեսցի եթէ յառնէ, և կամ եթէ կնոջէ վկայն և վկայութիւն հարցանողն պիտի մտանել 'ի խորան առանձին և փակել դրունս, և նախ երդմնեցուցանել վկայն 'ի վերայ սրբոյ աւետարանի որ զոր ինչ հարցմունք 'ի նմանէ արասցէ վկայն վկայեսցէ աննախանձաբար, և ամենայն զոր ինչ վկայութիւն որ ելցէ 'ի բերանոյ վկային երդմնեցելոյն նոյն վկայութիւն շարեսցի 'ի վերայ թղթոյ, և վկայն ձեռնադրեսցէ, և վկայութիւն առնողն հաստատեսցի ձեռամբ իւրով գրելով այսինքն՝ մարտիրոս որդոյ բաղրամի 'ի գէղջէն շիրականի սեպտեմբերի ամսի 14 յամի Տեառն